# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մայիսի 2016 թվականի N 128-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 377-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի 2016 թվականի մայիսի 6-ի N 7884-16 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 13-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 515-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»* N 377-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել ներմարզային երթուղիների մրցութային հանձնաժողովի կազմը՝

1) ***Տարոն Գևորգյան*** - հանձնաժողովի նախագահ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

2) ***Ալեքսան Եղիշյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ,

3) ***Վարդան Քալանթարյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

4) ***Արմեն Հակոբյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

5) ***Համլետ Սողոմոնյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

6) ***Արամ Մանյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Կոտայքի հաշվառման-քննական բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր *(համաձայնությամբ)*,

7) ***Հրաչ Ազոյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ *(համաձայնությամբ)*.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** — **Կ. ԳՈՒԼՈՅԱՆ**

**2016 թվականի մայիսի 10**
**ք. Հրազդան**